

ՊԱՏՈՒՀԱՆ ՄԸ ՀՈՐԻԶՈՆԻՆ ՎՐԱՅ

Այս հեռաւոր ավանգանդներէն, աւելի հեռաւոր հորիզոններու վրայ պատուհան մը բանա՛լ... հօր երեսակայութիւն եւ խոր հաւատք հարկաւոր է: Հարկ է քափանցել հագար եւ վեց հարիւր տարիներու մշուշոտ հորիզոնները, անցնիլ պատմութենէ պատմութիւն, եւ արեւի նման կախուիլ այն քուականին վրայ՝ որ կու գար յաւիտեան մնալու Կասպից ծովէն մինչեւ Տփլատ, Կովկասի լեռներէն մինչեւ Կիլիկիա տարածուող աշխարհի մը վրայ:

[illegible]

Զացեկացն հիմա պարգապէս անուն է․ Մշոյ դաշտին մէջ, Մեղրագետի ափերուն, կիսաւեր կամար մ'իսկ չկայ մեզի հետ խօսելու․ ո՛չ ոսկի ողկոյքը կախումած է սարբինայէն, ո՛չ աղբիւր գացող գեղջկուհիներուն երգերը կը լսուին․ Հացեկացն հիմա պարգապէս անուն է։ Բայց ի՞նչ ոյժ ունէր այդ գիւլուն մէջ՝ հազար պատուհաններով տանար, հազար սիւներով կաթողիկէ, որ բուն մէջ՝ հազար պատուհաններով տանար, հազար սիւներով կաթողիկէ, որ իր սրբական որմերու հովանիին տակ պիտի կանչէր բանաստեղծն ու պատիր սրբական որմերու հովանիին տակ պիտի կանչէր բանաստեղծն ու պատիր մագիբը, շինականն ու ագնուականը, անմահն քափօրներով աշխարհէ աշխարհ տանելու իր ծոցին մէջէն արեւուն եկած մանուկ մը։

տանելու իր ծոցին մէջէն արեւուն եկած սառնակը՝
Դժբախտաբար ժլատ եղած է մեր պատմութիւնը՝ փառաւոր մանկու-
քեան մը մայիսներուն վրայ խօսելու։ բայց ես կ'երեսկայեմ Մամիկոնեան
պայագատ մը, եւ Հացեկացն ինձ համար երկնահաս դղիակ մը, ուր մանուկ
մը՝ ամբողջ խանդ, ամբողջ երազ եւ անհանգիստ աստղ, հօր մը՝ Վարդանի
մը՝ ամբողջ տակ, եւ սիրելի մօր մը — որուն անունը ծանօթ չէ, բայց բոլ ա-
շխբերուն տակ, եւ սիրելի մօր մը — որուն անունը ծանօթ չէ, գրեթէ ոսկի հաս-
յելով կը մեծնար, հովերէն երգ հաւաքելով կը մեծնար, ցորենի ոսկի հաս-
կերով կը պսակուէր, քիչ ենթականերու հետ ծաղիկներու լեզուն կը սորվէր :
... Եւ այժմ եւ Տիգրան Ա թագաւորն ալ զիս նման էր ճշտեցնում :

Հայր եւ մայր կը նայէին եւ չէին գիտարարում, որ իրենց
 զոհը իրենց ընտանիքի մեջ մտնուելու, կը հարցնէին իրարու:

- Ի՞նչ պիտի ըլլայ այն մասովը, զի մարդիկ չեն կարող հասնել իրենց հոգեկան հարստությանը:
- Մամիկոնեան սուրբը մեջքին՝ ասպետ մը, կը փափաքէր հայրը:

— Մեծ իմաստասեր մը, քերես խորհէր մայրը:

— Մեծ իմաստասեր մը, քիմիա խորհուրդի մայրը
Բայց ոչ ոք կ'երազէր քէ անիկա պիտի ըլլար ասպետ եւ գիտնական,
նզնաւոր եւ վարդապետ, քարայրի մարդ, ոսկիի հանքերուն մէջ աշխատող
բանուոր: Պիտի ըլլար արտերուն մէջ մշակ, սարերուն վրայ հովիւ, ագիտ եւ
հարուստ ընտանիքներու հայր հասարակաց, ակուքներու անմար կրակ եւ
հայրենիքի ծիածնուած երկինք:

Եւ ահա օր մը, քաւ անհկա աշդ անծանօթ գիւղէն, ո՛չ արագիլի քե-
ւերով եւ ո՛չ գաղթող քոչունի նման, այլ՝ սպիտակ ձի մը հեծած, սուրը
մէջքին եւ տառատուն հովերուն: Թաւ դէպի Արեւելք, Արարատի գագա-
թէն անցաւ, Արաֆսի փրփուրներէն անցաւ, հասաւ հոն՝ ուր արքայական պա-
լատներ, պարիսպներ ու գմբէթներ շքեղ ոստան մը կազմած էին. Արտաշատ:

Հայրենիքի սէրը՝ մարմնացած հրեշտակի նման՝ անոր աչքերուն երեւ-
ցաւ. զինքը կը փնտռէր, իրեն պիտի յանձնէր գերագոյն առաքելութիւն մը,
գոր ո՛չ Արտաշէս, ո՛չ մեծն Տիգրան եւ ո՛չ ալ հզօր Տրդատ մը իրենց յաղթա-
կան օրերուն կրցած էին կատարել: Անբերտը՝ հոգի մը իջաւ իր մէջ, հրե-
ղէն լեզու մը դպաւ իր շրթներուն, կերպարանափոխեց զինքը, վերացուց Ար-
տաշատի պալատներէն, գմբէթներէն վեր. եւ անհկա տեսաւ իր շուրջը հո-
գիներու աւերակ, տենչերու ունայնութիւն, փշրուած գեմեր, այրիացած
հայրենիք մը: Ի՞նչ կ'արժէր սուրը ձեռքին՝ շղթայուած քագաւորի մը քով
կանգնիլ, կամ օտար բռնաւորներու հրամանագիրներ կարդալ՝ չարչարուած
ժողովուրդի մը առջեւ:

— Ո՛չ, ո՛չ. հայրենիք, դուն պէտք չես ուրիշ կոխան ըլլալ, չոր հա-
ցով ապրիլ, քրտինգ բռնաւորներու ակերտուն մէջ քափել. դուն արդար ես,
բարի ես, դուն արժանի ես երջանիկ ապագայի մը, եւ ես պիտի բանամ քու
լուսաւոր ուղիդ: Այսպէս ըսաւ, ու լքեց աշխարհ եւ մարդիկ, Գեղարդայ ձո-
րերը գնաց, Սասունի լեռները բարձրացաւ, սեւ սփեմի մը ամպերուն տակ
ծածկուեցաւ՝ իր ներաշխարհին մէջ ապրելու: Հոն աշդ լուսեան մէջ կարելի
էր հսկայ գաղափարներ յղանալ, հայրենիքի փրկութեան նոր բանապարհ մը
բանալ, բանակներ զինել, ռաւիկն ու ագնուականն եղբայրութեամբ շղթա-
յած, նոր շարքեր կազմել՝ խաչանիշ դրօշակներու տակ: Թերեւս տարիներ նա-
յեցաւ իր գաղափարին, սպասեց որ մարմին ու ձեւ առնէ, Պենտեկոստէի հրե-
ղէն լեզուն դառնայ, հաղորդելու համար՝ նշխար առ նշխար՝ միլիոնաւոր սե-
րունդներ:

Բայց նեղ ֆարայր մը չէր կրնար ամփոփել աշդ մեծութիւնը, չէր կրն-
նար երկար տարիներով ժայռերու պատեանի մը մէջ սեղմել անոր հոգին.
դուրսը, լոյսին ծարաւ եղբայրներ ունէր, հեթանոսական քանձր ֆօղ մը ծած-
կած էր հազարաւոր աչքեր. պէտք էր բանալ գանձոք, արդարութեան արե-
գակին դարձնել, հաւատքը գրահ ընել, եւ փառաւոր ապագան՝ նպատակ: Ո՛վ
գիտէ, ֆանի՛ կրակոտ հատեր խօսեցաւ, ֆանի՛ շանքեր քափեց խաւարն հա-
լածելու:

Ջահ մը ձեռքին վագեց Գողթնէն Սիւնիք, մինչեւ կովկաս լեռները, ան-
ցաւ տունէ տուն, սրտէ սիրտ քափանցեց. բայց իր ջանքին լոյսն յունական էր,
լոկ ձեռքն հայկական. տեսան մարդիկ, եւ անոնց աչքերուն մէջ անհետ մա-
րեցաւ:

— Հայկական լոյս, հայկական լոյս, եղաւ իր կանչը: Մտածկոտ ու
ննշուած, գրեթէ անկարող իր պայքարին մէջ, տարածեց բազուկներն Արա-
րատէն Արագած. նառագայթի նման տարածեց եւ երկար օրեր մնաց աղօ-
թական, աչքերն երկինք, արցունքն աստղերուն խառնած: Գիր կը հայցէր,
հայկական լոյս կը խնդրէր: Հայրենի բարբառը մասունքի նման դնել հայուն
շրթներուն՝ որ հայ Աւետարանով հաղորդուին:

Գիշեր էր: Արտաշատ հանդիմանաւ մէջ կը նիքիէր: Աշխարհ դանդաղօ-
րէն կը հոլովէր դէպի Արեւելք, եւ անոր հետ ինքն ալ՝ երանական տեսիլքով

դէպի լոյսը կ'երթար: Մեր հորիզոնին վրայ պատուհան մը բացուեցաւ, ան-
բերտը՝ քաթ մը իջաւ ու մատներու ոսկի ծայրով գրեց իր սրտին վրայ Ա. Բ.
Գ.: Հրա՞շք էր քէ երագ, բանաստեղծութիւն քէ պատմութիւն. եւ մէկն էր
եւ միւսը: Աստուածային ծնունդ մը կատարուեցաւ եւ Հայը գտաւ ինքզինքը,
իր դէմքն ու անձնականութիւնն ունեցաւ: Հիմա ազգ էր, պատմութիւն ու-
նէր, հիմա մանուկներ կրնային ջահաւորուած քափօրով անցնիլ ազատն ի վեր
ի Մասիս:

— Ովսաննա՛յ, փա՛ռք ի բարձունս:

Ա՛յ չեն մարիք հայկական լոյսի ջահերը, մէկը միւսին ջահը կը վառէ,
դարը դարուն կը յանձնէ. Արտաշատի մէջ Աստուածաշունչ մատնանի կը
փոխուի, Աւարայրի մէջ սրտի բոց կը դառնայ, Դուինի դիւաններուն մէջ՝
ոսկեղբորազ դիւցազնավէպ:

Թող գան փոշիից ամբակներ, կոխեն եւ անհետ չփանան մեր հողէն,
լոյսը ո՛չ սուրով, ո՛չ աղեղով կարելի է բեկանել, ոչ բռնաւոր շղթայի զար-
նել: Հիմա ազգ էր, ազատ երկինք ունէր. կրնար Յոյնին հետ իմաստութեան
վրայ խօսիլ, Պարսիկին աչքերը շլացնել ու բազմիլ ազգերու մէջ ազգ, բա-
նաստեղծներու մէջ բանաստեղծ, սուրբերու մէջ աւելի սուրբ: Մեսրոպ պա-
րըսպեց մեր սահմանները, լոյսը գրահ տուաւ ամէն Հայու. ամէն տան մէջ
Աւետարան մը նրագի պէս վառեցաւ ու Սաղմոս մը շղթայեց Հայութիւնն եր-
կրնիին հետ:

Եւ ո՞վ խանդավառ յուզումով չարտասուեց՝ երբ առաջին անգամ հայ-
րենի տանաքներուն մէջ հնչեց հայաբարբառ Աստուածաշունչը:

Երբ շարական եւ աղօթք՝ խունկերու ծուկներուն հետ երկինք բարձրա-
ցան, եւ Հայն աղօթեց իր լեզուով, իր սրտով, իր հաւատով, իր աչքերով:

Ո՛վ գիտէ, ո՛րքան բարձրացան, ընդարձակուեցան հայրենի գմբէթներն
անոնց աչքերուն առջեւ, ամէն ոք պատուհան մը բացաւ իր հոգիին դիմաց՝
մինչեւ յաւիտեականութիւնը տեսնելու:

Հիմա հայերէն կ'աղօթէին, հիմա եղբայր էին իրարու, սրտակից, աղօ-
թակից եւ կրնար Մեսրոպ խորանին վրայէն գոչել.

— Ողջոյն տու՛ք միմեանց ի համբոյր սրբութեան...:

Սրբութեան համբոյր է հայ տառը, սրտեր կապող ոսկի շղթայ, ոսկի
բուրվառ՝ ուր հայ սիրտը կ'արժարծի ամէն օր, ոսկի կոչնակ՝ որ ամէն արե-
ւածագին տունէ տուն անցնելով կը հնչէ. Զարթի՛ք, արդի՛ք լուսոյ:

Բայց դուրսը փոքորիկ կայ, մարտի աղաղակ եւ արիւնի ծով. պէտք է
Մեսրոպ իր մատներով գրէ խաչանիշ դրօշակին վրայ... Այսու յաղթեա՛լ:

Այսուհետեւ ինքը պիտի զինէ հաւատով եւ մտքով վարդաննե-
րու բազուկները. ինքը «մարտակից զինուորական դասու», իր ապստանական
սուրը մէջքին՝ Մամիկոնեան ֆաջութեամբ պիտի նետուի պատերազմի դաշտ.
պիտի ըլլայ վահան, Աշոտ երկաթ, Անիի պարիսպ, Լեւոն մեծագործի անյաղթ
բազուկ: Անհկա գիր տուած է, ազատութեան տենչ եւ գոհագործումի նուիր-
բում՝ հայրենի խորանին վրայ: Հիմա իր ժողովուրդն ազգ է, պաշտպան իր
պատիւին ու գոյութեան, իր ամօթխած կոյսերը կրնան սրբութիւնն իրրել
սպիտակ հանդերձ գգնուլ, մայրերն ակութիւն քով կարդալ «Հաւատարեցե՛

մահս մեր ընդ մահու արդարոց». Հայը գիտէ նահատակութիւնով բազմապատ-
կուիլ, մեռնելով յարութիւն առնել: Գիր ունէին. ամէն բան ունէին:
Թէպէտ Օշականի մէջ ամփոփեցին իր յոգնած նշխարները, եւ Հացեկէն

